

ջեալ, փորձեալ ի սասանայէ եւ յաղթեալ նմա. քարոզեալ մարդկան զփրկութիւն. աշխատեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ եւ ծարաւեալ, յետոյ իջեալ կամաւ ի չարչարանս, խաշեալ, մեռեալ մարմնով եւ կենդանի աստուածութեամբն, եւ չոզումն իջեալ ի դժոխս անբաժանելի աստուածութեամբն, քարոզեալ չոզոցն, անբեալ զդժոխս եւ ազատեալ զճոզիսն, յետ երկից աուրց յարուցեալ ի մեռելոց եւ երեւեալ աշակերտացն:

Հաւատամք զտէրն մեր Յիսուս Բրիստոս նովին մարմնով համբարձեալ յերկինս եւ նստեալ ընդ աջմէ Հօր, այլ եւ զաւրց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս. որ եւ է յարութիւն ամենայն մարդկան:

Հաւատամք եւ զնստուցումն զործոյ, արդարոցն՝ կեանք յաւիտենական, եւ մեղաւորացն՝ տանջանք յաւիտենական:

Բուն իրաց վեճակէն շատ հեռու է ինչ որ Աքրոտեր աս դաւանութեան համար կրտէ. «Առաքելոց հանգանակին վրայ իւրաւամբք ըսուածք՝ այնչափ աւելի վստահութեամբ աս Հայոց եկեղեցեաց դաւանութեանը վրայ կրնայ ըսուիլ որչափ որ անոր ծագումը Հայոց պատմութեան մէջ չենք գտներ: Աւստի ճշմարտութեան շատ համաձայն կ'երեւայ որ տոյն դաւանութեան տարերքը կամ քրիստոնէական կրօնին ամենապարզ սկզբունքը նոյն իսկ Ս. Գրիգորէն առնուած են՝ որն Հայկական ազգը Վրիստոսի հաւատքին բերաւ. եւ ետքը զանազան հերետիկոսութեանց առթիւ՝ որոնք Աստուծոյ եկեղեցւոյն մէջ բուսան, նոր յաւելուածներով ընդարձակուեցան հայրապետներէն, արքեպիսկոպոստներէն եւ եպիսկոպոստներէն, եւ այնպէս առաջիկայ քրիստոնէական հաւատոյ դաւանութիւնը յառաջ եկաւ:»,

Ի վերայ այսր ամենայնի այդ քրիստոնէական հաւատոյ դաւանութիւնը նոր ատենուան գործք է, այս ինքն 14^{րդ} դարուն կէսերը Տաթևացեաց գաղտոցէն խմբագրուած, որոնք անհաշտելի թշնամիք էին կաթողիկէ միութեան եւ պաշտպան միաբնական մոլորութեան՝ ջանիւ եւ գրով: Ան ձեւը միստոպոստալ մի թևոթիթիւն աս գաղտոցին նշանաբանն է:

Աս դաւանութիւնն ըստ մասին խմբագրուած է — 1. մեր հանգանակէն. — 2. առաքելոց հանգանակէն՝ զորն որ ճանչցան մերինոնք 14^{րդ} դարուն. (աս խօսքը՝ հաղորդութիւն սրբոց, մինակ նոյն հանգանակին կը վերաբերի.) — 3. աթանասեան ըսուած հանգանակէն՝ որն որ կ'սխիս. «Ար որ կամեսցի փրկել.», որովհետեւ աս հանգանակն ալ մեր Հարցը անձանօթ չմնաց: Ասայի վարդապետ՝ որն որ 13^{րդ} դարուն համբաւաւոր էր բուն Հայաստանի մէջ բազմութեամբ աշակերտելոց, մէկ ձառի մը մէջ՝ զորն որ հաւատոյ վրայ գրած է եւ դեռ ձեռագրաց մէջ է, կը գործածէ